ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 3/1

ք. Երևան 19 նոյեմբերի 2020թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ կետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ»-ում (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 03.05.2018 թ. թիվ 6/5 որոշմամբ) կատարել լրացում՝ ավելացնելով 5-րդ բաժին հետևյալ բովանդակությամբ.

V. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐ (ԱՌՑԱՆՑ) ԵՂԱՆԱԿՈՎ

Որոշակի հանգամանքների (արտակարգ դրության, ռազմական դրության, համաճարակի և այլն) դեպքում ուսանողների պրակտիկան, ըստ անհրաժեշտության, կարող է կազմակերպվել հեռավար (առցանց) եղանակով:

Հեռավար (առցանց) եղանակով պրակտիկան կազմակերպվում և անցկացվում է (ներառյալ՝ գնահատվում է) սույն կարգի դրույթներին համապատասխան:

Հեռավար (առցանց) պրակտիկան, որպես կանոն, անցկացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով՝ օգտագործելով տարբեր հարթակներ և գործիքակազմ:

Ուսումնական պրակտիկան հեռավար (առցանց) անցկացվում է ԵՊՀ դասախոսների կողմից՝ օգտագործելով համապատասխան գործիքակազմ՝ համակարգչային վիրտուալ լաբորատորիաներ, տարբեր թվային հարթակներ, ուսումնական տեսաֆիլմեր, ներկայացումներ և այլն:

Մասնագիտական պրակտիկան հեռավար (առցանց) անցկացվում է սույն կարգի 8-րդ կետում նախատեսված վայրերում: Պրակտիկայի անցկացմանը մասնակցում են ֆակուլտետի կողմից նշանակված անմիջական ղեկավարը (մագիստրանտի դեպքում՝ թեզի ղեկավարը), ինչպես նաև ընդունող կողմի մասնագետները: Պրակտիկան իրականացվում է ծրագրին համապատասխան՝ օգտագործելով համապատասխան գործիքակազմ:

Մանկավարժական պրակտիկան հեռավար (առցանց) անցկացվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում (որոշ դեպքերում նաև տվյալ ֆակուլտետի 1-ին կուրսերում): Պրակտիկայի անցկացմանը մասնակցում են ԵՊՀ-ից՝ մասնագիտական առարկայի դասախոս-մեթոդիստը, մանկավարժը, հոգեբանը, իսկ դպրոցից՝ տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը, դպրոցի տնօրենը և փոխտնօրենը: Մանկավարժական պրակտիկան հեռավար (առցանց) անցկացվում է տվյալ պահին

հանրակրթական ուսումնական հաստատության կողմից օգտագործվող հարթակ(ներ)ի միջոցով:

Հեռավար (առցանց) պրակտիկայի ընթացքը (մասնագիտական և մանկավարժական) գրանցվում է ուսանողի անհատական էլեկտրոնային օրագրում, որում ըստ ամսաթվերի ամփոփ ներկայացվում են կատարված աշխատանքները, պրակտիկայի տևողությունը, վայրը և կցվում «կարծիք-բնութագիրը»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ